

## ԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՄԻՐԱԾ «ՀԱՄԱՌԱԽԱՏ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԳ» ԶԵՌԱԳՐԵՐԻ (CBL551\* և Մ10772)<sup>1</sup> ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՆՔԸ

XVII դարում գործած Ամիդի գրչության դպրոցի «գրչապէտ» Հովհաննես Երեցի<sup>2</sup> աշխատանքներն ուսումնասիրելիս հայտնաբերեցինք բովանդակությամբ ու ձևավորմամբ եղակի ձեռագրական երկու նմուշ, որոնցից մեկը գրվել է 1601 թվականին, իսկ մյուսը, որ դրա ընդօրինակությունն է, 1607 թվականին: Առաջինն այժմ պահպում է Դուբլինի Զեսթր Բիթի գրադարանում՝ CBL551<sup>3</sup> համարի տակ, իսկ երկրորդը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Մ10772<sup>4</sup>: Զեռագրերը մինչ այժմ չեն դրվել գիտական շրջանառության մեջ<sup>5</sup> և համակողմանի ուսումնասիրության կարիք ունեն: Այս հոդվածում կփորձենք քննել դրանց աղբյուրագիտական հենքը՝ մասնավորապես աղյուսակային կառուցվածքն ու պատկերազարդ էլեմենտները:

\* Զեսթր Բիթի գրադարանի թիվ 551 ձեռագրի ուսումնասիրության և թվային էջերի ձեռքբերման համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Գալուստ Գյուլբենկյան հիմնարարին (“Armenian Studies: Short Term Grants for PHD”):

<sup>1</sup> Զեռագրերի հավաքածուների համար օգտագործված են հետևյալ հապավումները, որոնց հետևում է ձեռագրի համարը. Ե – Երուսաղեմ, Հայոց Պատրիարքարանի հավաքածու, Է – Էջմիածնի մատենադարան, Մ – Մաշտոցի անվան Մատենադարան, Վ – Վեճենայի Միսիրարյան միաբանություն, Վի – Վիեննայի Միսիրարյան միաբանություն, BL – British Library (Բրիտանական քանգարան), CBL – Chester Beatty Library (Զեսթր Բիթի գրադարան), NLI-National Library of Israel (Իսրայելի ազգային գրադարան):

<sup>2</sup> Գրչապէտ կոչման համար աեւ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի ժէ գարի հիշատակարներ (1601-1620), հ. Ա, Եր., 1974, էջ 297-9 (Մ4912), աեւ նաև Հ. Ռուկան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միսիրարեան ի Վիեննա, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 106-7 (Վի625): Հովհաննես Երեցի անունով հայտնաբերել ենք շուրջ 25 ձեռագիր, որոնցից առաջինը 1587 թ.-ին գրված Հայոմավորքն է (Մ10326), իսկ վերջինը՝ 1621-ին գրված Ալեստարանը (Գ. Արտահանական, Թորոս Աղբար, հ. Բ, Կ. Պոլիս, 1894, էջ 425), հնմտ. Ս. Տեր Ներսիսյան, «Նպաստ մը Ամիրի դպրոցի պատմութեան», Հանդէս Ամսօրեալ, 1957, թի 3-5, էջ 177-181, S. Der Nersessian, Armenian Manuscripts in the Walters Art Gallery, Baltimore, 1973, pp. 56-9:

<sup>3</sup> Տե՛ս S. Der Nersessian, *The Chester Beatty Library, A Catalogue of the Armenian Manuscripts*, v. 1. Text, Dublin, 1958, pp. 4-7:

<sup>4</sup> Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Եր., 2007, էջ 196: Տե՛ս նաև Օ. Եղանեան, Աշխատութիւններ, երաժշտակության պատրաստեց Գ. Տէր-Կարպաննը, Եր., 2014, էջ 268-9 (ձեռագրի թվահամարը նշված է 10681, որի փոխարեն պեսն է լինի 10772, հշտումները մերն են՝ Ա. Ա.):

<sup>5</sup> Ինչպես նշվել է ծ. 3-ում, Զեսթր Բիթի գրադարանի ձեռագիրը նկարագրել է Սիրարկի Տեր-Ներսիսյանը, որի պատրաստած ձեռագրացուցակներում բացի ձեռագրերի ընդունված նկարագրություններից, կան նաև ուղղորդող դիտարկումներ:

### Զեռագրերի ընդհանուր նկարագիրը

*CBL551* ձեռագիրը հատուկ ձևաշափ ունի. կազմված է իրար սոսնձած 6,84մ երկարությամբ մագաղաթյա հմայիլանման թերթից, որին գրքի տեսք է տրվել ծալվածքների և կաշվե կազմի<sup>6</sup> միջոցով։ Վերջինս միայն փեղկեր ունի, որոնք ամրացած են առաջին և վերջին ծալված էշերին։ Տեքստն անծալ թերթի մի երեսին է և, քանի որ ձեռագիրը երկու կողմից բացվելու հնարավորություն ունի, ապա մի կողմից բացելու դեպքում տեքստ է, իսկ հակառակ կողմից՝ դատարկ։ Նմանատիպ գրքերն ակրողիոնածե բացվելու համար հայտնի են «ակրողիոն-գիրք» անվամբ<sup>7</sup>։ Ի տարբերություն նշվածի՝ *Մ10772* օրինակը մեկ պրակից բաղկացած սովորական գրքային ձևաչափով է։ Երկու ձեռագրերի գրատարածքն օգտագործված է երկայնքով, և դրանք ընթերցվում են ներքեւից վերև բացվածքով։ Օրինակները թերթակալման փոխարեն էշակալված են։ *CBL551*-ն կազմված է 37 էշից (1-37), *Մ10772*-ը՝ 32 (ա-լթ)։ Վերջիններիս գրատարածքը երկու կողմից երիզում են կարմիր ականթատերևների հյուսվեն ժապավենները։

Սիրաբի *Տեր-Ներսիսյանը*, նկարագրելով *CBL551* ձեռագիրը, անվանել է “Abridged Bible”<sup>8</sup>։ Այս բնորոշումը հավանաբար քաղված է հիշատակարանից, ըստ որի՝ «Արդ գրեցաւ և ծաղկեցաւ ոսկէնկար մատեանս որ կոչի Համառաւտ Աստուածաշունչ....» (Էջ 36)։ Մատենադարանի օրինակը (*Մ10772*) կրում է «Գաւազանագիրք Հին եւ Նոր Կտակարանաց»<sup>9</sup> խորագիրը։ Մենք ձեռագրերը պայմանականորեն անվանել ենք «Համառաւտ Աստուածաշունչ»։ Դրանց բնագիրը բովանդակում է ծառ-աղյուսակի ձևով աստվածաշնչան պատմության ճյուղագրություն և գավազանագիրք, որոնք ուղեկցվում են տեքստային բացատրություններով և այլ աղյուսակներով։ Ծառի հիմնական մասը Քրիստոսի ծծնդաբանությունն է, որում միահյուսված են Ղուկասի (Ղ. Գ 23-38) և Մատթեոսի (*Մտ. Ա. 1-16*) տեքստերը<sup>10</sup>։

Բնագրում օգտագործված ծառը սիսեմատիկ կառուցվածք ունի. հիմնականում կազմված է անվանակիր «բոլորակ»-ներից և կապ-գծիկներից ու կապ-«այուներ»-ից (տարագույն), որը ներառում է նաև պատկերագարդ էլեմենտներ, ինչպիսիք են պատկերագիր մեղալիոններն, զարդամոտիվ բոլորակները ու Աղամի ու Ելայի տեքստամիջյան մանրանկարը։ Պարզ բոլորակներում

<sup>6</sup> Կազմի երկու երեսը միանման դրոշմագարդով է ձևավրած, որը երկու ծայրերից եգրազարդվող նշան (turān) ծաղկազարդ մեղալիոն է։ Այս մասին տե՛ս A. Gacek, *Arabic Manuscripts. A Vademeicum for Readers*, Boston, 2012, p.151, S. Der-Nersessian, *The Chester Beatty Library...*, p. 4:

<sup>7</sup> A. Gacek, *op. cit.*, p. 6.

<sup>8</sup> Տե՛ս ձ. 3:

<sup>9</sup> Տե՛ս ձ. 4:

<sup>10</sup> Տես նաև Եսաբիոսի Կեսարացոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, Էջ 36-43։

գրված են աստվածաշնչան և պատմական անձնանունները, իսկ շափերով ավելի մեծ պատկերագիր մեղալիոններն և զարդամոտիվ բոլորակները հատկացված են հանգուցային անձանց: Մեղալիոնները ուկե ֆոն ունեն, որոնց մեջ ներառված կերպարները գոտկատեղից կտրած, երեք քառորդով կամ դիմահայաց, ուկե լուսապսակներով, դիմային առանձնահատկություններով օժտված դիմապատկերներ են: Նրանց անձը պարզված է շղթայական կապակցմամբ: Իսկ մյուս ձևավորման դեպքում անվանակիր բոլորակները շրջազարդված են ուկե նախշամոտիվներով և դրանց օղակող երկրորդ բոլորակով: Ծառի սկսվածքն է Ադամի ու Եվայի մեղսագործությունն ամփոփող մանրանկարը, որից ճյուղավորվում են 430 անվանակիր բոլորակ և 27 պատկերագիր մեղալիոն<sup>11</sup>: Ծառով պայմանագորված բնագրում ձևավորվել է գրավոր տեքստերի միջանկյալ դասավորություն: Այդ պատճառով վերջիններիս տեղակայումը շափազանց խիտ է, և տեքստերը տողատված են գծերի, բոլորակների ու սյուների միջև: Դրանք գրված են կանոնավոր բոլորգրով, որոնց գլխագրերը զարդագիր են, սկսվածքները՝ գունավոր: Այս ձևավորումների շնորհիվ տեքստերն ակնառու կերպով տարանշատվում են միմյանցից:

Ծառը համակարգված է աստիճանակարգային (հիերարխիկ) և տախտակների կառուցվածքային սկզբունքով: Մինչև Գավիթ թագավորի հայր Հեսսեն՝ հիմնականում աստիճանակարգային է (CBL551 էջ 7-17/Մ10772 էջ 3-13), որի դեպքում իրարից անշատ ճյուղագրությունները դասավորված են ժամակագրական, երեկոն էլ համաժամանակյա կարգով (տե՛ս ներդիր, նկ. 35): Ներկայացված են Ադամի ու Եվայի, նահապետներ Նոյի, Արքահամի, Հակոբի, ինչպես նաև Սավուղ թագավորի ազգածառերը և մարգարեների-դատավորների, քահանաների ճյուղերը: Առաջին շորս ազգածառերին է ներհյուսված Քրիստոսի ծննդաբանությունը (Ղե. Գ 32-38, Մտ. Ա 2-5):

Հեսսե ազգապետով առանձնացված է նաև Քրիստոսի ծննդաբանությունը. էջերի կենտրոնով իշնում է Հեսսեից Քրիսոս ձգվող կանաչ սկուն-առանցք (CBL551, էջ 17-30/Մ10772 էջ 13-26), որի երկայնքով տեղադրված են Քրիստոսի նախնիների անուններով բոլորակներ կամ պատկերագիր մեղալիոններ (տե՛ս ներդիր, նկ. 36): Իսկ այսն վերջին բաժինը վերաբերվում է Քրիստոսի

<sup>11</sup> Նահապետներ Նոյ (CBL551, էջ 9/Մ10772, էջ 5), Արքահամ (CBL551, էջ 10/Մ10772, էջ 6) և Հակոբ (CBL551, էջ 11, մեղալիոնային չե, Մ10772՝ մկրտած), Մովսես մարգարե (CBL551, էջ 13/Մ10772, էջ 9), Հետու Նավե դատավոր (CBL551, էջ 14/Մ10772, էջ 10, մեղալիոնային չե), Բենիամին՝ Սավուղի նախահայր (CBL551, էջ 16/Մ10772, էջ 12), Գավիթ բազավոր (CBL551, էջ 17/Մ10772, էջ 13), Քրիստոսի նախահայրեր Եղիակիմ (CBL551, էջ 24/Մ10772, էջ 20) և Եղիազար (CBL551, էջ 27/Մ10772, էջ 23), «Քմանուել Քրիստոս» (CBL551, էջ 29/Մ10772, էջ 25), «Վշացյալ Քրիստոս» (CBL551, էջ 30/Մ10772, էջ 26), Տիրամայրը մանկան հետ (CBL551, էջ 31/Մ10772, էջ 27, օրանտ դիրքով), 15 առաջյամեր (CBL551, էջ 31-4/Մ10772, էջ 27-30, 11 առաջյամեր, Մատարիաս, Պողոս առայիշ, Հովհափ-Բառնաբաս, Բառնաբաս):

երկրային կյանքին ու մահվանը (տե՛ս ստորև): Քրիստոսի ծննդաբանության տվյալ ընդգծումը հավանաբար կապված է եսայու մարդարեռությունը կերպավորող «Հեսսեի ծառը» պատկերագրության հետ:

Սոլոմոն թագավորին հաջորդող աստվածաշնչան ընթացքը ներկայացված է համաժամանակության կարգով (CBL551 էջ 18-30/Մ10772 էջ 14-26), որը գլխավորապես համապատասխանեցված է Քրիստոսի ծննդաբանությանը: Այս գեպքում կենտրոնական կանաչ-սյունը խորագրվելով «Կարգ թագաւորաց Յուղա և ազգատոհմն Քրիստոսի» անունով ներմուծված է նույնատիպ կառուցվածք ունեցող հինգ այլ խորագրված սյուների համակարգի մեջ (Խորայելի թագավորներ, քահանայապետներ, այլազգի թագավորներ<sup>12</sup>, Հուդայի և հսրայելի մարդարեներ, (տե՛ս ներդիր, նկ. 37)): Այուները տարագույն են և գունային կողավորման շնորհիվ դրանց բովանդակությունը համակցվում է գունի հետ<sup>13</sup>: Այունաշարն ընդհատվում է բաժանարար գծերով և նոր խորագրերով (դրանք գրված են սյուների գունին համապատասխան ցուցանշում), որոնք շատ գեպքերում նախորդների շարունակությունն են: Տվյալ ընդհատումները խորհրդանշում են հրեաների աստվածաշնչան պատմության հետկալ ժամանակափուլերը՝ թագավորությունների շրջան, բարելոնյան գերություն, երուսաղեմի վերաշինում, Մակաբայեցիների ապստամբություն, Քրիստոսի երկրային կյանք և մահ:

Վերջին հատվածը գրաղեցնում է երեք էջ, որում Քրիստոսի ծննդաբանության կենտրոնական կանաչ սյունն ու դրան ուղեկցող ձյուղավորումները շարունակվում են մի փոքր այլ ձևավորմամբ: Էջերի միջնամասը առանձնացված է բաժանարար գծերով: Նշված գրատարածքում մեկը մյուսի տակ հետկալ ձևավորումներն են ու գրությունները.

1) CBL551 էջ 28/Մ10772 էջ 24 – ցուցատախտակ՝ «Յեղք Քրիստոսի» գրությամբ,

2) CBL551 էջ 29/Մ10772, էջ 25 – մեղալիոն՝ «Էմանուել Քրիստոս» պատկերով-տեքստ՝ «Յղութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղաւ ի բուն թվականին ընդ նորա ժմ<sup>թ</sup> (19) յապրիի է (7) յաւուր չորեքշաբթի և ծնաւ յունվարի վեցն. Յավուր Եշաբթի և ի նոյն քանիս մկրտեցաւ յաւուր կիրակէի. և ի՝

<sup>12</sup> «Կարգ թագաւորաց ասուրց», «Թագաւոր Բարեկոնի» կամ «Թագաւոր Բարեկոնի», «Թագաւոր Պարսկաց», «Թագաւորովինք Յունաց» (չորս ճյուղ է), «Թագաւոր Սիրեաց-տց», «Թագաւոր Հռոմայեցտց», «Տերութիւնք Հռով Մայեցտց», «Կայսէր հռոմայեցին»:

<sup>13</sup> CBL551 էջ 19 /Մ10772 էջ 15-ում սյուների գույների մասին բացատրություն է, ըստ որի՝ «Այսպէս զիտացիր՝ որ ամէն կարգի սիւն ազգ մի գոյն է. և այսպէս ինչ ուր վճարի կարգն. և է ժամանայից սիւնն լուրջ. մարգարէցն ի ժամանակս ի թագաւորացն Յուղա դեղին: Թագաւորացն Յուղա. և ազգատոհմին Քրիստոսի կանաչ: Թագաւորացն Խորայելի կարմիր: Մարգարէցն ի ժամանակս թագաւորացն Խորայելի ծիրանի. և այլազգի թագաւորացն նարընջի»:

ծնըդենէն մինչև յաւարտ շարշարանացն .լԳ ամք. և Գ ամիսք որէն աւուրք. ԺԲ  
Խ. Ճ. և ԽԳ (12043)»<sup>14</sup> – զարդամոտիկ բոլորակ «Քրիստոս Մանուկ» գրությամբ,

3) *CBL551* էջ 30/Մ10772 էջ 26 – մեղալիոն՝ «Վշտացյալ Քրիստոս»  
(*Man of Sorrows*)<sup>15</sup> պատկերով – տեքստ՝ «Աստ կատարի Զ (6) դարն ըստ  
Եբրայեցոցն որ է ամք ԽԳ (7033)և ամիսս Գ (3)» (տե՛ս ստորև):

*Միշնմասի երկու կողմերում համաժամակալա կարգով դասավորված են*  
*«Թագաւորք Խորայէղի», «Կայսէրք հոռմայեցիք» և «Վերակացուք Խորայէղի»*  
*ցուցատախտակներից ճկուղավորվող գավազաններն ու Հերովդես Մեծի ազ-*  
*գածառը (տե՛ս «Թագաւորք Խորայէղի»): Այս հատվածում է նաև Աստվածած-*  
*նի մայր Աննայի ազգածառն և աշակերտների անուններով բոլորակները (11*  
*առաքյալներ, ինչպես նաև Մատաթիաս, Պողոս, Հովհանիք-Բառնաբաս, Բառնա-*  
*բաս), որոնցից մի քանիսը սերում են Աննայի ընտանիքից:*

Բնագիրը, ներառյալ Քրիստոսի երկրային կյանքի ավարտը, բաժանված է  
վեց դարագլուխների, որի մասին նշված է առաջին դարի ավարտը խորհրդա-  
նշող ենովքի մասին տեքստում (*Ծնն. Ե 18, CBL551, էջ 8/Մ10772, էջ 4*)<sup>16</sup>,  
ապա՝ կանաչ սյան ավարտին: Ենոքին վերաբերող տեքստում հիշատակվում են  
նաև յոթերորդ՝ Հանգստյան և ութերորդ՝ Վերպատմական կամ Երկրորդ  
գալստյան շրջագիրկերը (տե՛ս Ճ. 16):

Մասի հավելվածն է աշակերտների պատկերագիր մեղալիոններն ու  
նրանց կարճ վարքերը (*CBL551, էջ 31-4/Մ10772 էջ 27-30*), որոնց առաջնոր-  
դում է Տիրամայրը մանկան հետ պատկերագիր մեղալիոնն ու նրա վարքը: Այս  
բաժինը առանց կապակցման է և մեղալիոնները հիմնականում տեղակայված  
են մեկը մյուսի տակ, իսկ տեքստերը՝ մեղալիոններին կից:

Մասի գրեթե յուրաքանչյուր անվանը կից է տվյալ անձի կենսագրական  
կամ նրա ժամանակաշրջանը նկարագրող կարճ տեքստը/երը: Դրանցից բացի՝  
հանդիպում են այլ բացատրություններ: Բոլորակներում գրված աստվածա-  
շնչյան և պատմական անձնանունների գրության ձևը հիմնականում չի համա-  
պատասխանում հայերեն ընդունված տարբերակներին, իսկ տեքստերը, որոնք  
Աստվածաշնչի վերապատումներ են, քաղված են պարականոն բնագրերից:

<sup>14</sup> Հմմտ. Մտ. Բ 1, Ղկ. Բ 1-6, Ղկ. Գ 1-21:

<sup>15</sup> Տերմինի հայերեն համարձեմը մերն է Ա. Ա.:

<sup>16</sup> «...Եւ աստ կատարեցաւ առաջին դարն՝ ի Յարամա՝ ի յենովք: Երկրորդն՝ ի ջրհեղեղն: Եր-  
րորդն՝ ի յաշտարակն: Չորրորդն՝ ի Յարրահամ: Հինգերերդն՝ ի շինութիւն տանարին: Վե-  
ցերերդն՝ ի մարմնանալ Տեռան մերոյ և փրկչին Յիսոսի Քրիստոսի: Ե-երերդն ըստ ոմանց  
զկոչումն ներանոսաց ասեն ի հավատն Քրիստոսի և յութերորդն զալուսան Քրիստո-  
սի....», այս մասին տե՛ս Տե՛ս «Պատմեն տոմարի» (Ե-ԺԵ դդ.), աշխատասիրությամբ Ջ. Է-  
նաթյանի, Եր., 2002էջ 166, հմմ. Մ. Սքոուն, Պարականոն բնագրեր և աւանդութիւններ, Եր.,  
2014, էջ 163-4, A. Scafì, *Mapping Paradise, A History of Heaven on Earth*, Hong Kong,  
2007, pp. 68-9:

Բնագրի նշված աղյուսակային համաժամանակյա մոդելն ու բովանդակությունը ներտեքստային առընչություններ ունեն Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հետ:

Ծառն ուղեկցվում է նաև չորս աղյուսակներով: Դրանք են՝ 1. Նոյի տապանի չորս սխեմատիկ պատկերները, որոնցից երկուսը կամարաձև են, երկուսը՝ երկթեք վերնամասով (*CBL551* էջ 8-9/*Մ10772* էջ 4-5), 2. Ելից ճանապարհի 42 օթևանների անուններով ոճավորված աղյուսակ-տախտակը, 3. Վկայության տապանակն ու նրան շրջապատող զւտացիների ու խրայեցիների ցեղերի (*CBL551* էջ 16/*Մ10772* էջ 12) ու 4. Երուսաղեմի հատակագծի (*CBL551* էջ 25/*Մ10772*, էջ 21, խորագիրը՝ «Երուսաղեմ քաղաքն ըստ Նեէմիի շինուածքի») անվածև (*wheel diagram*) աղյուսակները: Հավելենք, որ անվածև աղյուսակներից առաջինը նույնպես գունային կողավորում ունի և քարտեզագրված է հակադարձ ուղղությամբ<sup>17</sup> վերին կողմը հարավն է, ներքեւինը՝ հյուսիսը:

«Երկնային երուսաղեմ» ամբողջ էջը զբաղեցնել մանրանկարով է սկսվում բնագիրը (*CBL551*, էջ 4/*Մ10772*-ում՝ բացակա), որին հետևում է ճակացտագրդով ներածականը (*CBL551*, էջ 5/*Մ10772* էջ 1, բացատրում է բովանդակությունը, Աստվածաշնչի կիրառած կանոնն ու նյութի կառուցվածքը<sup>18</sup>), ծառի տեսքով Աստվածաշնչի գրքերի ցանկը (*CBL551*, էջ 6/*Մ10772*, էջ 2, խորագիր՝ «Աստուածային գրեանք»), իսկ առաքյալների մեդալիոնների ավարտին եզրափակիչ՝ «Յաղագս Նեռին»<sup>19</sup> խորագրով վախճանաբարանական տեքստն է (*CBL551*, էջ 34-5/*Մ10772* էջ 30-1): Ներածականից բացի կան այլ նախադրություններ (*CBL551*, էջ 3, 7/*Մ10772*, էջ 3):

Գեռագրերից յուրաքանչյուրն ունի երկու հիշատակարան. գրչի՝ գլխավոր հիշատակարանը վերջում է (*CBL551*, էջ 36-7/*Մ10772*, էջ 31-2), իսկ ստացող վարդապետի անունով ընծայականը՝ միշնամսում (*CBL551*, էջ 15/*Մ10772*, էջ 11)<sup>20</sup>:

<sup>17</sup> Այս մասին տե՛ս [http://en.wikipedia.org/wiki/South-up\\_map\\_orientation](http://en.wikipedia.org/wiki/South-up_map_orientation) (25.06.2015, 13:38):

<sup>18</sup> «...Եւ զի կամեցայ խաւաել ի վերայ տոհմանց և ազգակցութեանց եւ պատմութեանց Հին և Նոր Կտակարանաց, պատշաճ բուեցաւ ինձ նախ բաժանել զգիրս Հին և Նոր Կտարանացն: ԶՀին Կտակարանացն բաժինն կարգել կամիմ ըստ երբայցտցն կարգի և բաժանմանցն. ուստի և էաս սկզբըն և սփոեցաւ ընդ ամենայն ազգս: Եւ զիարգ Նոր Կտարարանացն կարգեցի ըստ կարգի ուղղափառ եկեղեցւոյ սուրբ վարդապետաց ի բաժանմանս բոլորակացդ....»:

<sup>19</sup> Բնագրը Ների ծննինին, գործունեությանը և մահվանը վերաբերող առասպել է, որը ներտեխսատյին առնշուրյուններ ունի Հովհաննու հայտնության ԺԱ-ԺԹ և ԺԵ գլուխների մեկնության հետ: Այս մասին տե՛ս Մեկնութիւն Յայտնութեան Ա. Ցովհաննու առաքելոց, Համառուեալ՝ ի Պետրոսէ արքեպիսկոպոսէ նախիջևանցոյ Աղամալեան Բերդումեանց, Կալվարիա, 1846, էջ 165-223, 256-262:

<sup>20</sup> Նախշամոտիվներով ու եռալյուտներով ավարտվող ուղղանկյան ուղրամարին ֆոնին ուկեցրված է տվյալ ձեռագրի ստացող վարդապետի անունը՝ «Տեան Յիսուսի Քրիստոսի ծառայ Մրապիոն վարդապետ (CBL551)/Յովակի վարդապետ (Մ10772)»:

### Նախադրությունների և հիշատակարանի բննություն

Հովհաննես երեցի աշխատասիրած երկու ձեռագրերից առաջինը (*CBL 551*) սկսվում է հեղինակային նախադրությամբ, որտեղ բացատրվում է բնագրի ստեղծման հանգամանքները, նպատակը և բովանդակությունը. «Զմիտ Աստուածաշունչ գրոց՝ զերկայնութիւն և զդժուարութիւն և զծովութիւն աշակերտացն կամ ընթերցողացն առ այն իրս, որք իբրև հիմնեն աստուածային գրոց և զանգիտութիւն ոմանց՝ յաղագս չքաւորութեան գրոց, կամեցայ ըստ շափոյ կարաւղութեան իմոյ լուսաւորել. և բազմակերպ ճառիցն համառաւտարար յայտնել, և զազգատո՞մս սուրբ հարց և զգործն նոցա ի մի փոքր գիրք հաւաքել: Յորոց Քրիստոս ի ձեռն Ղւտական և Թագաւորական ցեղիցն ծնաւ: Եւ զի հետևեալք աստուածային բանիցն մի ձանձրասցին վասն յերկարութեան բանից, այլ գիւրաւ ուսանիցին և աւկտիցին: Մեծ աշխատութեան և արթնութեան ետու զիս կարճ ի կարճոյ զճշմարտութիւն ճառիցն բացայայտել: Մկսա յԱղամայ և ի նախահարց, դատաւորաց և թագաւորաց, մարգարէից և քահանայից ժամանակաց նոցա, և մինչև ի Քրիստոս աւարտեցի զկարգ թուոց նոցա» (*Էջ 3*): Մեջբերվածը կրկին վերաշարադրված է այս և *Մ10772* ձեռագրի ծառի սկզբնամասում (*CBL551*, *Էջ 7/Մ10772*, *Էջ 3*, «Աղամի ու Եվայի մեղսագործության» մանրանկարին կից): Աստվածաշնչի գրքերի ցանկին նախօրդող ներածականը (*CBL551*, *Էջ 5/Մ10772* *Էջ 1*) նույնպես հեղինակային է (ան՛ ա 18-րդ Ժ.):

Ձեռագրերը եզրափակող գլխավոր հիշատակարանում տրվում է դրանց ստեղծման պատմությունը: Հստ *CBL551*-ի հիշատակարանի՝ Ամիդի հոգեոր առաջնորդ Սրապիոն Ուռհայեցին տեսնելով նմանատիպ ձեռագիր՝ Հովհաննես երեցին հանձնարարել է ընդօրինակություն կատարել. «....Սրապիոն Ուռհայեցին տեսեալ զիմաստաշար և զգիւրահմուտ կարգ տոհմից ազգակցութեանց պատմութեանց հին և նոր կտակարանաց Աստուածաշունչ տառիս և ետ գրել զսա ուկենկար զարդարիւք ի վայելումն անձին իւրոյ սրբասիրի....» (*Էջ 37*): *Մ10772* ձեռագրի հիշատակարանի նույն հատվածում Սրապիոն վարդապետի փոխարեն գրված է այդ ձեռագիրը ստացող Հովսեփ Հուզվեցի վարդապետի անունը (*Էջ 32*): Հիշատակարանից պարզվում է նաև, որ նյութի հեղինակն անհայտ է. «....որպէս Աստուածաշունչ պատմութեանց ժողովողս թեպէտ ոչ եմք տեղեակ թէ յումմէ զիմաստութիւնս այլ տեսողք՝ զուարձանան ի բան իմաստութեանս...»<sup>21</sup>:

Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ նախապես մեջբերված նախադրությունները այնուամենայնիվ ոչ թե քննվող ձեռագրերինն են, այլ նրանց համար նախօրինակ ծառայած բնագրինը:

<sup>21</sup> Տե՛ս *CBL551*, *Էջ 37/Մ10772*, *Էջ 32*, ըստ որի «...Որպէս զԱստուածաշունչ պատմութեանց ժողովողս, որ ինքն արարող բանիս չէ յայտնի, այլ բան իմաստութեան կայ ի զուանութիւն բանասիրաց»:

### «Համառաւ Աստուածաշունչ» բնագրերը

“Abridged Bible” («Համառաւ Աստուածաշունչ») և «Գաւազանագիրք Հին Եւ Նոր Կոտակարանաց» խորագրերով ձեռագրեր հայտնաբերելու փորձերի արդյունքում ի հայտ եկան Մատենադարանում պահպող մի քանի միավոր, իսկ ըստ բովանդակության և ձևավորումների՝ քսանից ավելին, որոնց ցանկը տրված է հոդվածի հավելվածում: Գրեթե նույնատիպ ձևավորման ու բովանդակության հետ մեկտեղ՝ ձեռագրերը տարբեր կերպ են խորագրված: Այդ շարքում հանդիպում են «Գաւազանագիրք Նահապետաց» (Մ2700), «Ճիւղագրութիւն Նախնեաց» (Ե627), «Գրիգոր Թորոսանց, Ազգատիմ սուրբ հարց ու գործ նոցա» (Մ352), «Տոհմաթիւ Սուրբ գրոց» (Վ894) անունները և նույնիսկ «Ազգաբանութիւն Արիստոտելի» (Է205) սխալ վերնագիրը: Սրանցից շատերը ավելացված են ձեռագրացուցակ կազմողների կողմից և մասնակիորեն են համապատասխանում բնագրերին: Այս և նյութի պահանջները շբավարարող նկարագրության պատճառով հնարավոր է, որ որոշ օրինակներ դուրս են մնացել մեր կազմած ցանկից:

Բովանդակությունից և ձևավորման տարբերակներից ելնելով՝ ձեռագրերը բաժանել ենք երեք խմբի՝ Ա, Բ և Գ.

### Ա. խոսք – CBL551, Մ10772, Վ894, Մ481, NLI49, Մ2700, Վի1410, Մ2710, Է205:

Այս խմբի միավորները քննվող CBL551 և Մ10772 ձեռագրերի կրկնությունն են: Դրանցում հանդիպում են գրքի երկու ձևաչափը (ակորդիոն և դասական գիրք): Գլխավոր հիշատակարանի բովանդակությունը նույնն է բոլոր օրինակներում փոխված են միայն գրչի և ստացողի անունները: Այս առանձնահատկության շնորհիվ բացահայտվեց չպահպանված մի քանի միավոր<sup>22</sup>: Դրանցից մեկը պատկանել է եկեղեցական նշանագոր գործիչ և մատենագիր Մինաս Համդեցուն, որի թողած հիշատակարանում ձեռագիրն անվանված է «Համառաւ Աստուածաշունչ»<sup>23</sup>, ինչպես ուսումնասիրվող ձեռագարերում է:

Խմբի միավորները Հովհաննես երեցի՝ 1601 թ.-ից հետո արված ընդօրինակություններ են, որոնց մի մասի գրչության վայրը Ամիդն է:

<sup>22</sup> Ըստ զինավոր հիշատակարանի՝ պարզվեց, որ Գարեգին Սրվանձայանցի «Թորոս Ազգար»-ում (տե՛ս Գ. Մրուանձանանց, Թորոս Ազգար, հ. Բ, էջ 463-465) և Ներսես Ակինյանի «Բաղեշի դպրոց»-ում (տե՛ս Ն. Ակինեան, Բաղեշի դպրոցը, 1500-1704, Վիեննա, 1952, էջ 205) նշված չպահպանված ձեռագրերը «Համառաւ Աստուածաշունչ» են, նաև հիշատակարանը կողմնորոշիչ էր Բարձրահայաց Ս. Աստվածածնի թիվ 45 (Գ. Մրուանձանանց, Թորոս Ազգար, հ. Բ էջ 386) և Խորակի ազգային գրադարանի թիվ 49 ձեռագրերը (NLI49) նույնացնելու համար (նկարագրույնը տե՛ս M. Stone, “An Armenian Manuscript in the National and University Library, Jerusalem,” REArm., tome IV, Paris, 1967, pp. 57-61):

<sup>23</sup> Տե՛ս Գ. Մրուանձանանց, Թորոս Ազգար, հ. Բ էջ 463-465:

**Բ խոմք – Մ7340, Մ6612, Մ431, Մ5889, Մ3953, Մ7350, Մ4759:**

Եեռագրերը չունեն ակորդիոն-գիրք ձևաշափը և նրանց պատկերագարդ էլեմենտները աղքատիկ են՝ բացակայում է «Երկնալին Երուսաղեմ» մանրանկարը, Հեսու նավեի պատկերը (տե՛ս ձ. 11), եզրագարդ բոլորակները, լուսանցաերիզները: Գրավչությունից զուրկ լինելը պայմանավորված է նաև նկարչական հմտության պակասով՝ դիմապատկերները պարզունակ են, ներկապնակը՝ միօրինակ: Ներածականի ճակատազարդի, կերպարների, ինչպես նաև զարդագրերի հարդարման համար օգտագործված է հիմնականում կարմիր գույն: Դրանց մեջ մասի մանրանկարչությունը անավարտ է. նկարելու համար գծագրած տարածքները դատարկ են թողնված :

Հստ ձեռագրացուցակների տվյալների՝ Բ խմբի միավորները ի հայտ են գալիս XV դարից սկսած (Մ7340) և շարունակվում են մինչև XVIII դարը: Սակայն այդ թվագրումը թեական է, քանի որ դա և մնացած այլ օրինակներից շատերը գլխավոր հիշատակարան չունեն:

**Գ խոմք – Մ352, Մ10772:**

Այս խմբի օրինակները, պարունակելով նույն բնագիրը, գգալիորեն տարբերվում են և Բ խմբերից: Նույն բովանդակությամբ ծառը կառուցվածքային տարբերություն ունի՝ Քրիստոսի ծննդաբանությունը կենտրական գծով, առանց ընդհատման ձգվում է Ադամից ու Եվայից մինչև Քրիստոս: Հստ աշխարհարարման վեց ժամանակափուկերի՝ ծառը ենթարկված է ներքին տրոհումների: Զեռագրերը պատկերազարդ էլեմենտներ և գունային ձևավորումներ չունեն: Բացի այդ նախորդ խմբերում նշված տեքստերի գրության ձևերն (անվանակիր բոլորակներ) ու ձևակերպումները այս խմբի ձեռագրերի հետ չեն համընկնում, ինչպես նաև այստեղ բացակայում են որոշ տեքստեր (օրինակ՝ առաքյաների վարքերը): Բնագրին նախորդում է մեջբերված նախադրությունը, ինչպես CBL551 ձեռագրում է:

Գ խմբից հաջողվել է գտնել երկու օրինակ: Առաջինը 1367-71թթ. Սուրխաթում գրված Մ352 Աստվածաշնչին կից 7-րդ բնագիրն է<sup>24</sup>, իսկ երկրորդը՝ 16-րդ դարի ընդօրինակություն է (Մ1770 «Ժողովածոյ», 8-րդ բնագիր)<sup>25</sup>: Հավանաբար Մ352 ձեռագրի հիշատակարանից ենելով՝ դրանք վերագրվել են գրիչ Գրիգոր Թորոսանցին («Գրիգոր Թորոսանց, Ազգատոհմ սուրբ հարց եւ

<sup>24</sup> Բնագիրը տե՛ս Մ352, էջ 400ա-10թ (ըստ վերջին թերթակալման): Նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենագրանի, հ. Բ, Եր., 2004, էջ 210-18:

<sup>25</sup> Բնագիրը տե՛ս Մ1770, էջ 167ա-86ա (ըստ վերջին թերթակալման): Ըստ նախագաղափար օրինակի հիշատակարան՝ Մ1770 ժողովածուն կրկնօրինակվել է է 1425 թվականին գրված ձեռագրից: Այս մասին տե՛ս Մայր ցուցակ Մաշտոցի անուան Մատենագրանի, հ. Ե, Եր., 2009, էջ 1142:

գործի նոցա» (Մ352)) և շրջանառության մեջ են մտել «Բանք Թորոսանց» անվան տակ (Մ1770)<sup>26</sup>:

### «Համառատ Աստուածաշունչը» հայ մատենագրության մեջ

Ազգաբանություն ներկայացնելու ակունքում ընկած է աստվածաշնչան մողելը, որը կիրառվել է մեր մատենագրության մեջ՝ սկսած Մովսես Խորենացուց:

Համեմատական քննությունը ցուց տվեց, որ 12-րդ դարի մատենագիր Սամվել Անեցու «Հաւաքումնք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղաքականության երկը (կարձ «Ժամանակագրություն») ընդհանուր նմանություններ ունի «Համառատ Աստվածաշնչի» բնագիր հետո: «Ժամանակագրությունը» գրվել է Եվսեբեիոս Կեսարացու «Քրոնիկոնի» աղյուսակային մողելով ընդգրկելով Աղամից մինչև Անեցու ժամանակաշրջանը՝ 1163 թ.<sup>27</sup>: Հավելենք, որ այն հետագա հեղինակների կողմից շարունակվելով հասցվել է մինչև 1776 թ.-ն<sup>28</sup>: Բայց բովանդակության և կառուցվածքի՝ Սամվել Անեցու բուն աշխատությունը բաժանված է երկու մասի՝ Աղամից մինչև Քրիստոսի ծննդից մինչև 1163 թ., որտեղ աղյուսակ-տախտակները կիրառված են Քրիստոսի հաջորդող ժամանակահատվածի համար: Երկի առաջին մասը կարելի է առանձին դիտարկել՝ որպես Աստվածաշնչի ազգաբանություն և ժամանակագրություն, որին ներհյուրաված է նաև հայ ժողովրդի խորենացիական ծագումնաբանությանը: Դրա և «Համառատ Աստուածաշնչի» միջև առկա են բովանդակային նմանություններ, որը բացատրվում է երկու երկերի միևնույն աղբյուրից օգտվելու հանգամանքով<sup>29</sup>:

Նմանատիպ մեկ այլ երկ՝ Ավետիք Տիգրանակերտցու «Գաւազանագիրքը» կամ «Աղիւսակապատմագրութիւնը» նույնպես առնչվում է նյութի հետ: Երկը գրվել է 1715 թ.-ին նշանավոր գիտնական, թարգմանիչ ու մատենագիր Ավետիք Տիգրանակերտցու ձեռքով Հայոց կաթողիկոս Աստվածատուր Համադանցու (1715-1725) պատվերով<sup>30</sup>: Այն ընդգրկում է Աղամից մինչ 1715 թ. և, ինչպես վկայում է հեղինակը, հավաքական գործ է: Ինքանգիր համարվող Մ1492 օրինակը տարաբնույթ ձևավորումներ ունեցող բնագիր է երկայնակի օգտագործված գրատարածքում պատկերագիր մեղալիոններով և անվանակիր բոլո-

<sup>26</sup> Տե՛ս ծ. 24 և 25:

<sup>27</sup> Տե՛ս Կ. Մաքենսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լարցումները, Եր., 2009, էջ 34-46:

<sup>28</sup> Սամվել Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն Աղամից մինչև 1776 թ., աշխատասիրությամբ Կ. Մաքենսյանի, Եր., 2014, էջ 220-357:

<sup>29</sup> Սամվել Անեցին իր բողած նախաբանում հայտնում է, որ հիմնականում օգտվել է աղյուրներ Եվսեբիոս Կեսարացուց և Մովսես Խորանացուց, առև նախորդ ծ., էջ 79-80:

<sup>30</sup> Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Եր., 1976, էջ 1014-1023: Տե՛ս նաև Անասյան Հ. Մանր երկեր, Եր., 1987, էջ 829-831:

րակներով ծառ-աղլուսակներին, ժամանակագրական տախտակներին զուգահեռ կան նաև տեքստեր, մանրանկարներ ու այլ աղլուսակներ<sup>31</sup>: Ավետիք Տիգրանակերտցու գործերը որոշ շափով լուսաբանվել են, նույնիսկ քննվել է «Գաւազանագրքի» առանձին հատվածների աղբյուրագիտական հենքը<sup>32</sup>, սակայն Աստվածաշնչին վերաբերող մասը կամ ձևավորումները դուրս են մնացել մասնագերտների ուշադրությունից: Ինչպես ցուց տվեց մեր ուսումնասիրությունը, «Գաւազանագրքի» նշված հատվածի հիմնական ձևավորումներն ու տեքստերը քաղված են «Համառաւտ Աստուածաշունչ» բնագրերից որևէ մեկից (Ա կամ Բ խումբ):

«Համառաւտ Աստվածաշնչի» մոդելը նմանություններ ունի նաև «Գիրք պորտահամարց յԱղամայ մինչև ի Քրիստոս» խորագրով երկի (Մ4486) հետ. բնագիրն ամփոփում է աստվածաշնչան ազգաբանական ծառեր: Վերջինս անգլերենից թարգմանել է 1695 թ-ին Աղափիր Ղալանդարյանը<sup>33</sup>:

### «Համառաւտ Աստուածաշնչի» ճախատիպը

Նախորդ գլուխների քննությունը հանգեցրեց այն կարծիքին, որ «Համառաւտ Աստուածաշնչի» աղբյուրը թարգմանական գործ է, որին անտեղյակ են եղել անգամ օրինակողները: Այս պնդման օգտին են հետևյալ փաստարկները.

1) բնագրում հանդիպող աստվածաշնչան և պատմական բազմաթիվ անունների ձևը չի համապատսախանում հայերեն ընդունված տարբերակներին

2) ներածականի և Աստվածաշնչի գրքերի ցանկի խորագիր-բացատրության մեջ հիշատակվում է<sup>34</sup> հայկական կանոն չկիրառելու հանգամանքը (տե՛ս 18)

3) որոշ տեքստեր գրված են ըստ լատինական ավանդույթի<sup>35</sup>

4) ի հայտ են գալիս պատկերագրական մի շարք նորամուծություններ (տե՛ս ստորև):

Եվրոպական մատենագրության մեջ աղլուսակները լայնորեն սկսել են կիրառվել XII դարից սկսած<sup>36</sup>: Այս ասպարեզում ամենանամեծ ձեռքբերումն է

<sup>31</sup> Տե՛ս նաև Մ6243, Մ7424: Օրինակներերը հետագայի հեղինակային լրացումներ են, որոնցում նկարչատարածքները սահմանագծած և դատարկ են բողնված:

<sup>32</sup> Տե՛ս Հ. Անասյան, Մանր երկեր, էջ 829-831, Պ. Զորբանյան, «Նոր նյութեր Աւետիք Տիգրանակերտցու մասին», Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1973, հ. 7, էջ 96-107:

<sup>33</sup> Տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենագրականի, հ. Ա, Եր., 1965, էջ 1222, նաև Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ 286-289:

<sup>34</sup> Աստվածաշնչի գրեթե խորագիր-բացատրություն՝ «Այսորիկ են կարգ աստուածային գրեանց Հին Կտակարանացն ըստ երայեցոցն: Եվ նոր Կտակարանացն. Ըստ ուղղափառ վարդապետացն եկեղեցւյ», տե՛ս CBL551, էջ 6 /Մ10772, էջ 2:

<sup>35</sup> Օրինակ՝ Աղամին վերաբերող առաջին տեխստը (սկսվածքը՝ «Աղամ ստեղծեալ ՚ի յազարակն Դամասկոսի»), Աստվածածնի մոր՝ Աննայի տոնմածառը, առայլների վարժերը:

XII դարավերջի ֆրանսիացի աստվածաբան վարդապետ, *Փարիզի եկեղեցու դիվանապետ (chancellor) Պետրոս Պուատեցու (Peter of Poitiers, մոտ. 1130-1205)* «Քրիստոսի ծննդաբանության Համառոտ պատմություն» (*Compendium Historiae in Genealogia Christi*) կամ կարճ “*Compendium*”, հայերեն՝ «Համառոտ Պատմություն») լատիներեն էրկը<sup>37</sup>: Համեմատական քննությունը ցուց տվեց, որ մեր ուսումնասիրության առարկա ձեռագրերի հիմքը Պուատեցու աշխատությունն է: Վերջինս մեծ ազդեցություն է թողել ամբողջ միջնադարի վրա: Այս մասին են վկայում միայն նմանատիպ ձեռագրերի մեծաթիվ կրկնօրինակումները, որոնց թիվը, ըստ ժան-Բատիստ Փիգինի (Jean-Baptiste Piggin) ձեռագրատախտակի, անցնում է 220-ը<sup>38</sup>: Դրանց մեջ կան նաև գերմաներեն և անգլերեն թարգմանություններ: Սակայն գիտական աշխարհին բնագրի հայերեն փոխադրությունները անհայտ են մնացել:

Նյութին վերաբերող ուսումնասիրությունների<sup>39</sup>, ինչպես նաև թվայնացված քսան հասանելի տարբերակների<sup>40</sup> ընդհանուր համեմատությունը հստակորեն ցուց է տալիս, որ մեր Գ խմբի ծառի կառուցվածքը համընկնում է Պուատեցու Մեծ ծննդաբանությանը (Great stemma): Եշված չորս աղուսակները՝ տարաբնույթ հարդարանքով, նույնպես առկա են լատիներեն օրինակներում: Սակայն նոյի տապանի՝ մեր ունեցած չորս տարբերակների փոխարեն այնտեղ երկուսն են: Դրանցում հանդիպում են Գ խմբի նման՝ առանց նկարագրդման, և բազմաձև նկարագրդմամբ ձեռագրեր: Վերջիններիս հատուկ են մեդալիոններում ներառված մանրանկարները, այդ թվում՝ Ադամի ու Եվային պատկերող, և գունային կոդավորումները, ինչպես նաև CBL551 ձե-

<sup>36</sup>Տե՛ս A. Worm, “*Arbor autem humanum genus significat: Trees of Genealogy and Sacred History in the Twelfth Century,*” *The Tree: Symbol, Allegory and Mnemonic Device in Medieval Art and Thought*, ed. P. Saloni & A. Worm, Turnhout, 2014 pp. 35-67; A. Worm, “‘Ista est Jerusalem’ Intertextuality and Visual Exegesis in Peter of Poiteries’ *Compendium Historiae in Genealogia Christi* and Werner Rolevinck’s *Fasciculus temporum*,” *Imaging of Jerusalem in the Medieval West*, ed. L. Dovkin & H. Vorholt, Oxford, 2012, pp. 123-6:

<sup>37</sup>Պետրոս Պուատեցու կենսագրական ակնարկը տե՛ս P. Moore, *The Works of Peter Poitiers: Master of Theology and Chancellor of Paris (1193-1205)*, Indiana, 1936, pp. 1-24: Տե՛ս նաև M. Norbye, ‘Peter of Poitiers’, *Encyclopedia of the Medieval Chronicle*, ed. R. G. Dunphy, Leiden and Boston, 2010, p. 2015:

<sup>38</sup>«Համառոտ պատմության» ձեռագրերի տախտակը տե՛ս <http://www.piggin.net/stemmamhist/petercatalog.htm> (26.06.2015, 15:04):

<sup>39</sup>Տե՛ս P. Moore, *op. cit.*, pp. 97-117: Տե՛ս նաև W. H. Monroe, ‘A Roll-Manuscript of Peter of Poitiers’ Compendium’, *The Bulletin of the Cleveland Museum of Art*, 65 (1978), pp. 92-107, և A. Worm, “‘Ista est Jerusalem’ Intertextuality and visual exegesis in Peter of Poiteries’ *Compendium historiae in genealogia Christi* and Werner Rolevinck’s *Fasciculus temporum*,” pp. 123-163, A. Worm, “*Arbor autem humanum genus significat: Trees of Genealogy and Sacred History in the Twelfth Century,*” pp. 55-60:

<sup>40</sup>Տե՛ս ձ. 38:

ուագրից մեջբերված նախադրությունը, որը Պետրոս Պուատեցու թողած նախաբանի հայերեն փոխադրությունն է:

Լատինական օրինակները նույնպես երկայնակի դասավորություն ունեն, որոնց մեծ մասը փաթութաձև ձեռագրեր են, կան նաև գրքային տարբերակներ: Վերջիններս հիմնականում կցված են Պետրոս Կոմեստորի «Սիոլաստիկայի պատմություն» (*“Historia Scholastica”*) երկին, որից էլ քաղված են հիմնական տեքստերը:

### Ա. և Բ խմբի ձեռագրերի ձևավորման աղբյուրագիտական նեճքը

Ինչպես արդեն նշվեց, Ա. և Բ խմբերը, ընդորինակված լինելով միմյանցից անկախ, նույն կաղապարային ընդհանրություններն ունեն: Հետևաբար դրանց բնօրինակը մեկն է: Իսկ Գ խումբը զգալիորեն տարբերվում է նրանցից: Հիմնվելով վերջինիս առանձնահատկությունների վրա՝ եզրակացնում ենք, որ դրա թարգմանությունը կապ չունի մնացած երկուսի հետ. այն լատիներեն այլ օրինակից արված ուրիշ թարգմանչի գործ է: Այդ խմբից XIV դարի երկրորդ կեսի վաղագույն օրինակի (Մ352) հայտնաբերումը ենթադրել է տալիս, որ վերջինիս թարգմանությունը Ա. և Բ խմբերի բնօրինակից ավելի վաղ է արվել<sup>41</sup>: Եվ եթե փորձենք հավանական ժամանակ նշել տվյալ երկու խմբի բնօրինակի թարգմանության համար, այնուամենայնիվ մեկնակետ կարող ենք համարել XIV դարը՝ որպես լատինական գրականության ակտիվ ներթափանցման շրջան<sup>42</sup>:

Լատիներեն ձեռագրերից Ա. և Բ խմբերի գլխավոր տարբերությունը ծառի համակարգման կառուցվածքն է և պատկերազարդ էլեմենտները. Քրիստոսի ազգաբանությունը առանձնացված է Հեսսեից սկսած, իսկ ընտրված կերպար-

<sup>41</sup> Այն, որ Մ352 ձեռագրի գրիշ Գրիգոր Թոռոսանցն անտեղյակ էր, թե իր նյուրը բարգմանական գործ է, նաև կից Աստվածաշնչի բնագրի նախագաղափար օրինակի հիշատարանը հուշում են, որ Գ խմբի բարգմանուրբյունը կարելի է թվագրել 13-րդ դարավերջով: Աստվածաշնչի նախագաղափար օրինակի հիշատակարանը գրված է Կիլիկյան բազավոր Հեթում Բ-ի ձեռքով (1289-1293, 1295-1296), ըստ որի «Համար Ցուանկին, որ ջամբիստը կոչեն, որ ի վերայ ամենայն Աստուածաշնչին ճապաղած է, ես Հեթումս, որ Յովհաննէս կոշիմ. բազում [աշխա] տութեամբ փոխեցի առ ի դիւրաւ գտանելո....», տե՛ս Մայր ցուցակ..., հ. Բ, էջ 216: Հմմտ. Մ2627 Աստվածաշնչի նախագաղափար օրինակի հիշատակարանի հետ, տե՛ս Մայր ցուցակ..., հ. Ը, էջ 799):

<sup>42</sup>Տե՛ս S. Der Nersessian, “Western Iconographic Themes in Armenian Manuscripts,” *Byzantine and Armenian Studies*, t. I, Louvain, 1973, pp. 611-630: Տե՛ս նաև Յովհաննէս Քոնեցի, Յաղագս Քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց և. Խաչիկյանը, Եր., 1977, էջ 8-39, և. Խաչիկյան, «Արտազի հայկական իշխանությունները և Ծործորի դպրոցը», Բանբեր Մատենադարանի, հմ<sup>ր</sup> 11, Եր., 1973, էջ 126-210: Քննության առարկա բնագիրը չի հայանաբերվել լատիներենից բարգմանված աշխատությունների ցանկում, հմմտ. Marcus Antonius von den Oudenrijn, *Linguae haicanae scriptores ordinis praedicationis fratrum unitorum et ff. armenorum ord. S. Basillii citra mare consistentium quotquot huc usque innotuerunt*, Bernae, 1960:

ների պատկերագրությունը հանդիպում է միայն հայկական օրինակներում: Հայտնի է, որ Պուատեցու ստեղծած դասական մոդելը ժամանակի ընթացքում բազմաթիվ ձևափոխությունների է ենթարկվել՝ յուրաքանչյուր օրինակող ներմուծել է իր նկարչական ոճն ու ճաշակը: Այն նաև նմուշ է ծառայել թագավորական ազգաբանությունների համար<sup>43</sup>: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերեն բնօրինակը նույնպես ենթարկված է խմբագրության: Ըստ Էռլիան, դա արվել է լատիներենից փոխադրումները բացատրելու, նյութը համակարգելու և ավելի մատչելի դարձնելու համար: Ասվածի վկայությունն են.

1) Աստվածաշնչի գրքերի ցանկ-ծառում նշված է Հին Կտակարանի հիմնական գրքերի քսաներկու անուն եռամաս բաժանմամբ: Այստեղ ձևային կաղապարն այնքան է պահպանվել, որ անգամ համապատասխան տեղում թագավորաց Ա և Բ գրքերի բոլորակները գծվել են և Աստվածաշնչի հայկական կանոնին չհամապատասխանելու պատճառով դատարկ են թողնվել: Սա էլ հավանաբար հիմք է ծառայել ներածականի և խորագիր-բացատրության մեջ Հին Կտակարանը Եբրայական կանոնով սահմանելու համար (տե՛ս ծ. 18 և 34):

2) Ակզենագիրը պահպանված է, և հավելվել են նոր տեքստեր: Դրա ցցուն վկայությունն է Պուատեցու հեղինակային նախաբանի անփոփոխ տեսքով XVII դար հասնելը կամ ներածականի, Աղամին վերաբերող երկրորդ տեքստի հավելումը և նմանատիպ այլ օրինակներ:

Այնուամենայնիվ, բնագրի պատկերզարդ էլեմենտների լատինական նմուշի ներմուծման օգտին են խոսում պատկերագրական որոշ նորամուծություններ: Դրանցից կանդրադառնանք ամենացայտուն օրինակներին՝ «Աղամի ու Եվայի մեղսագործություն» մանրանկարին ու Քրիստոսի փրկչական մահը խորհրդանշող «Վշտացյալ Քրիստոս» պատկերագիր մեղալիոնին:

«Աղամի ու Եվայի մեղսագործության» տեսարանում ոճավորված Կենաց ծառը Աղամի ու Եվայի մեջտեղում է: Մասի բնին փաթաթված օձը թեքված է Եվայի կողմը: Եերունու կերպարանքով Հայր Աստվածը երկնքից նայում է Աղամին (տե՛ս ներդիր, նկ. 38):

Պուատեցու մոդելով ձեռագրերում տվյալ տեղում սովորաբար ավանդական պատկերագրությամբ մեղսագործության տեսարանն է մեղալիոնի շրջանակի մեջ առնված, կամ պարզապես Աղամի ու Եվայի հանդիպակաց մեղալիոնները<sup>44</sup>: Ըստ հայկական պատկերագրական ավանդությի՝ Ծննդոց շար-

<sup>43</sup>Տե՛ս N. Marigold, “Arbor genealogiae: Manifestations of the Tree in French Royal Genealogies,” *The Tree: Symbol, Allegory and Mnemonic Device...*, pp. 69-93; De Laborderie O., “The First Manuals of English History: Two Late Thirteenth-Century Genealogical Rolls of the Kings of England in the Royal Collection,” <http://www.bl.uk/eblj/2014articles/pdf/ebljarticle42014.pdf> (29.06. 2015, 23:30):

<sup>44</sup>Տե՛ս BSB Clm. 820 (München, Bayerische Staatsbibliothek München), <http://daten.digitale->

քում սովորաբար ծերունու տեսքով Հայր Աստված չի պատկերվել<sup>45</sup>: Նրա ներկայությունը փոխարինվում էր «Աշխարհի արարիչ» խորհրդաբանությունը կրող Քրիստոսի կերպարով<sup>46</sup>:

«Վշացյալ Քրիստոս» (*Man of Sorrows*) պատկերագրությամբ մեղամոնում Քրիստոսը պատկերված է դիմահայաց, մինչև գոտկատեղը, ձեռքերը կրծքին խաշած, գլուխն ուսին հակած, խաշաթև լուսապատճենված, ձեռքերին՝ գամերի, մարմնին՝ վերքի հետքեր, փակ աշքերով (տե՛ս ներդիր, նկ. 39)<sup>47</sup>: Նրա հետևում խաշափայտի հորիզոնական թևն է:

Պուատեցու մողելում, տվյալ տեղում սովորաբար պատկերված է Խաչելության ավանդական տեսարանը, որոշ դեպքերում Տիրամոր ու Հովհաննես առաջալի զուգակցմամբ<sup>48</sup>: Հայկական մանրանակարչության մեջ «Վշացյալ Քրիստոս» պատկերագրությունը հանդիպում է Ութ մանրանկարիչների Ավետարանի 80 ա էջի լուսանցքում<sup>49</sup> (Մ7651): Սակայն դա չի ենթադրում, որ պատկերատիպը հետագա կիրառություն է ունեցել, քանի որ Ավետարանն առանձնանում է նորարական բազմաբնույթ նկարագրումներով<sup>50</sup>:

Հստ Հանս Բելթինգի՝ պատկերատիպը ծնունդ է առել բյուզանդական եկեղեցական միջավայրում՝ Զարշարանաց ուրբաթի ծիսակարգին ծառայելու նպատակով: XIII դարից այն տարածում է գտել եվրոպական արվեստում՝ կորցնելով իր նախնական գործառույթը<sup>51</sup>:

[sammlungen.de/~db/0004/bsb00040329/images/index.html?id=00040329&groesser=&fp=193.174.98.30&no=&seite=205](http://sammlungen.de/~db/0004/bsb00040329/images/index.html?id=00040329&groesser=&fp=193.174.98.30&no=&seite=205) (18.08.2015, 15:41), BSB Hss Clm 19414-  
<http://daten.digitale-sammlungen.de/0007/bsb00079104/images/index.html?fp=193.174.98.30&id=00079104&seite=374> (18.08.2015, 15:43):

<sup>45</sup> Տե՛ս T. F. Matews, “The Genesis Frescoes of Altamar,” *REArm.*, tome XVI (1982), pp. 245-257:

<sup>46</sup> Տե՛ս S. Der Nersessian, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, p. 80, fig. 456, Ա. Գեղրդեան, Անանուն հայ մանրանակարիչներ, Մատենագիտութիւն IX-XVII դդ., Գաֆիրէ, 2005, էջ 135, 383, հնմտ. V. Nersessian, *The Bible in the Armenian Tradition*, London, 2001, pp. 10-11:

<sup>47</sup> Հմմտ. G. Shiller, *Iconography of Christian Art*, V. 2., London, 1972, pp. 199-201:

<sup>48</sup> Տե՛ս OOLB Hs.-490, 9r-<http://digi.landesbibliothek.at/viewer/image/490/21/> (18.08.2015, 15:43),

Barcelona, Universidad cod. 762, 7r-<http://www.lluisvives.com/servlet/SirveObras/-03692846455795884532268/ima0013.htm> (18.08.2015, 15:43):

<sup>49</sup> Տե՛ս S. Der-Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century*, v. II, Washington, 1993, fig. 471:

<sup>50</sup> Տե՛ս S. Der-Nersessian, *Miniature Painting...*, v. I, pp. 104, 115, 169-175:

<sup>51</sup> Տե՛ս H. Belting, “An Image and Its Function in the Liturgy: The Man of Sorrows in Byzantium,” *Dumbarton Oaks Papers*, n. thirty-four and thirty-five, Washington, 1980-1981, pp. 1-12:

Կարծում ենք, որ «Համառոտ Աստվածաշնչի» հայկական բնօրինակի պատկերագարդ էլեմենտների, հետևաբար՝ նաև ծառի համակարգման կառուցվածքի համար հիմքը է ծառայել լատինական մի ձեռագիր, որն, ըստ երևույթին, Պուատեցու մողելի ինքնատիպ խմբագրություն է: Այլապես հայկական խմբագրության դեպքում չէինք ունենա հայկական պատկերագրությանը անհարազատ պատկերներ: Մեկ այլ կարևոր փաստարկ է հայկական քննվող երկու խմբի վերոհիշյալ կաղապարային բնույթը:

### «Երկնային Երուսաղեմ» մանրամկարի աղբյուրագիտական հենքը

Ա. խմբի կարևոր առանձնահատկությունը «Երկնային Երուսաղեմ» պատկերագրությամբ մանրանկարի առկայությունն է: Ինչպես նշվել է վերևում, տվյալ էջը բացակայում է Հովհաննեսի օրինակած Մ10772 ձեռագրում: Հավանական է, որ այն հետագայում է ընկել, քանի որ այդ օրինակը բավականին վնասված է (տե՛ս ծ. 11):

Մանրանկարի վերնամասում Սուրբ Երրորդություն է, ներքեւում՝ դրախտը՝ ոճավորված ութ ծաղկած ծառերի ու երկրի մակերևույթի մեջ միսրամամբ այն Երկնային Երուսաղեմի խորհուրդն է ստացել: Պատկերագրական նման հարաբերակցությունը նախադեպը շունի, սակայն երկու տեսարանն էլ նորություն չեն: Սուրբ Երրորդության պատկերագրությունը օրինաշափ համարելով՝ կանդրադառնանք դրախտի տեսարանին: Նմանօրինակ պատկերագրությամբ դրախտ առաջին անգամ հանդիպում է Ղրիմի մանրանկարչության մեջ՝ Թագեռու Կաֆայեցու 1430 թ. ծաղկած նշանավոր «Հարանց վարքում» (Ե285)<sup>52</sup>: այն «Որք զԴրախտին լեառն գտին» անունով թեմատիկ մանրանկարի դրվագներից է<sup>53</sup>:

Ենթադրելի է, որ մանրանկարը «Համառաւտ Աստուածաշնչի» բնագիր է ներմուծվել հետագայում: Հստ մեր համոզման՝ նրա հեղինակը Հովհաննես Երեցն է: Վերջինիս աշխատանքներից քաղված կենսագրական տեղեկությունները ցուց տվեցին, որ նրա տրամադրության տակ է եղել Թագեռու Կաֆայեցու բնօրինակը: Հստ Հովհաննեսի՝ 1599 թ. օրինակած Հարանց վարքի հիշատա-

<sup>52</sup> Նկարագրությունը տե՛ս Խ. Պողարեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Արբոց Յակոբանց, հ. 2, Երուսաղեմ, 1967, էջ 107-112: Մանրանկարի ուսումնասիրության մասին տե՛ս N. Stone, *The Kaffa Lives of the Desert Fathers*, Louvain, 1997, pp. 81-90:

<sup>53</sup> Տե՛ս N. Stone, *op. cit.*, fig. 7: Մանրանկարն արտահայտում է տեխնային ամբողջ շրան, ըստ որի՝ Ներսես Շնորհալու ժամանակներում վեց վանականներ դրախտը զանելու փնտրությունը վեց տարի հանապարհորդում են և, հասնելով ահարկումի լեռան, հրեշտակներից լուր են առնում, որ դրախտը լեռան կատարին է և որ մտնելու համար պես է սպասեն դատաստանի օրվան: Կանականներն անմահության բույրով հիանալով՝ որոշում են հետ դատնալ ու պատմել աեսածը և զալիս, պատմում են մեծ վարդապետ Ներսես Շնորհալուն: Այս մասին տե՛ս Վարք սրբոյն հարանցն և քաղաքագարութիւն նոցին, հ. I, Վենետիկ, 1855, էջ 348-9:

կարանի՝ Սրապիոն Ուռհայեցին 1591 թ. ուխտի գնալով երուսաղեմ, օրինակելու համար խնդրել է Թաղեռս Կաֆայեցու «Հարանց վարքը» և հաստատվելով Ամիդում, աշխատանքը հանձնարարել է իրեն<sup>54</sup>:

### Եզրակացուրյուն

Հովհաննես գրշապետի մանրանկարած *CBL551* և *Մ10772* նույնատիպ ձեռագրերի աղբյուրագիտական հենքի ուսումնասիրությունը ցուց տվեց, որ դրանց նախատիպը լատինական գործ է, որից բացի՝ բնագրում առկա են հայկական ներմուծումներ: Նշվածից ելնելով եզրակացնում ենք, որ մանրանկարչական հետագա ուսումնասիրության համար նյութը պետք է դիտարկել հայկական և լատինական պատկերագրական համատեքստում, սակայն գրշապետի անհատականությունն ու գերակատարությունը նպաստել են ստեղծագործության յուրօրինակությանն ու բացառիկ կարեռությանը: Հեղինակի անհատականության հայտանիշ ենք դիտարկում մի քանի հանգամանք.

1. Վերցնելով բնագրի կաղապարային մոդելը՝ ներմուծել է անձնական ոճն ու հմտովթյունը:

2. «Երկնային երուսաղեմ» մանրանկարի ներմուծումը ենթադրել է տալիս, որ Բ խմբում բացակա հարդարանքների և կազմի ձևաչափի հեղինակը նույնպես նա է:

3. «Երկնային երուսաղեմ» մոդելը ուղղակի ընդօրինակվել է Ա խմբի ձեռագրերում, իսկ Ավետիք Տիգրանակերտցու «Գաւազանագրքի» դեպքում այն ծառայել է որպես հիմնատեքստ:

<sup>54</sup> Տ. Պալեան, «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Կարապետի վանուց նոր գրադարանի Կեսարիա», Հանդէս Ամսօրեալ, 1959, թի 9-11, էջ 433-43: Այս Սուրբ Կարապատի գրադարանի օրինակը չի պահպանվել, սակայն Հովհաննես գրշապետը 1615 թ. կրկին ընդօրինակել և վերանորոգել է Կաֆայեցու «Հարանց վարքը», որը պահվում է Լոնդոնի Բրիտանական բանգարանում (BLArm. 27301): Նիւա Սրուունը, Թաղեռս Կաֆայեցու «Հարանց Վարքին» նվիրված ուսումնասիրության շրջանակներում համեմատելով BL Arm. 27301 և Վ1680 (1922) 14-5-րդ դարով թվագրվող «Հարանց Վարքից» անշատ նոյն մանրանակարված էջը, ենթադրում է, որ Վենետիկի ձեռագրի նշված էջը պատկանում է Հովհաննեսի՝ 1599 թ.-ի օրինակին: Նա նոյն ձեռքն է տեսնում նշված երկուսի և «Համառաւտ Աստուածաշնչի» դրախտի տեսարանի մեջ, տե՛ս ձ. 52:

**Հավելված**  
**«Համառատ Աստուածաշունց» ձեռագրերի ցանկ**

Համար	Բովանդակություն	Նկարագրություն	Ժամանակ	Տեղ	Գրիչ, ծաղկող	Ստացող
(Գ) Մ352	Աստուածաշունց, Զ. [Գրիգոր Թորոսանց, Ազգատոհմ Սուրբ հարց և զործք նոցա], 398ա-405ս	Գիրք, նկարագրություններ չունի	1367 - 1371	Սուլտան, Սուրենար	Գրիգոր Թորոսանց	Գրիգոր Թորոսանց, որդի Թորոս
(Բ) Մ7340	[Գաւազանագիրք Աստուածաշունց գրոց]	Փարույթ, նկարագրություններ չունի, հատված	ԺԵ?	-	-	-
(Բ) Մ6612	[Գաւազանագիրք Հին և Նոր Կտակարանաց], էջ 1ա-16ա	Գիրք, նկարագարդ	1575	-	-	-
(Գ) Մ1770	Ժողովածոյ, Բ. [Բանն Գրիգոր Թորոսանց], էջ 162ա-80թ	Գիրք, նկարագրություններ չունի	1589	-	Աստուածատուրդակ.	Հայրապէտ Զուղայեցի
(Ա) CBL551	“Abriged Bible” («Համառատ Աստուածաշունց», էջ 1-32)	Ակորդիոնգիրք, նկարագարդ	1601	Ամիդ	Յովաննէս, Ասլան	Մրապիոն Եղիսաբէթի վրդ.
(Ա) Մ10772	[Գաւազանագիրք Հին և Նոր Կտակարանաց], էջ 1-37	Գիրք, նկարագարդ	1607	Ամիդ	Յովաննէս	Յուսէփ Հուզվեցի վրդ.
(Ա) Տարնն*	[Աստուածաշունց]	-	1611	Ամիդ	Մինաս	Բարսեղ Աթիւեցի վրդ.
(Ա) Չնիւշ, Սիր. Ա. Ա..*	[Աւետարան]	-	1621	Ամիդ	-	Մարտիրոս Չնիւշեցի վրդ.

\*Ձեռագիրը չի պահպանվել և Ա. խմբի մեջ ներառելը պայմանական է՝ հիմնվելով գրչության վայրի վրա։ Ձեռագրի մասին տե՛ս ծ. 22։

\*Տե՛ս նախորդ ծ.։

(Ա)Վ894	Պատմագիրք Հայոց, Բ. [Տնհմարի սուրբ գրոց], էջ 4ր-34թ	Ակորդիոնգիրք, նկարզարդ	1626	-	-	-
(Բ)Մ4759	[Գաւազանագիրք Հին և Նոր Կտակարանաց], էջ 2թ-27թ	Գիրք, նկարազարդ	1628	-	-	-
(Բ)Մ431, Գիրք	[Գաւազանագիրք Հին և Նոր Կտակարանաց], էջ 1թ-23թ	Գիրք, նկարազարդումներ շունի,	1628	-	-	-
(Բ)Մ5889,	Ժողովածոյ, Ա. [Գաւազանագիրք Հին և Նոր Կտակարանաց], էջ 2ա-17ա	Գիրք, նկարազարդումներ շունի, անավարտ	1660	-	-	-
(Բ)Ե627	[Ճիշտագրութիւն նախանաց], էջ 32	Գիրք, նկարազարդումներ շունի	1668	-	-	-
(Ա)Մ2710	[Գաւազանագիրք նախապետաց], էջ 1թ-18թ	Ակորդիոնգիրք, նկարազարդ	1690	Կ.Պօլիս	-	Յովսէփ Վրդ.
(Ա)NLI49	“Brief Genealogy of Scripture” (Սուրբ գրի համառու ծննդաբանություն), թթ. 2ր-17վ	Ակորդիոնգիրք, նկարազարդ	1693	Ամիդ	-	Իսահակ Համբեցի Վրդ.
(Ա)Մ481	Ժողովածոյ, Ա. [Գաւազանագիրք Հին և Նոր Կտակարանաց], էջ 3թ-18թ	Գիրք, նակարազարդ, պատառիկ, անավարտ	ԺԷ	-	-	-
(Բ)Մ3953	[Միմիքար Վարդապետ, Գաւազանագիրք] էջ 1ա-17թ	Թերթեր, նկարազարդ	ԺԷ	Ներսէս Մարգ.	-	-

(Ա) Մ2700	[Գաւազանագիրք Նահապետաց], Էջ 2ա-17բ	Գիրք, նկարա- գարդրում- ներ շոնի, անավարտ	1798	Կ. Պօլիս	Մուրատ- խան Վա- նցի, Սի- մեռն Միածնա- կցի	Ներսէս Ղազ- վինցի բա- րունապէտ
(Ա) Վի1410	[Կարգ եւ թիւ Հիմն եւ նորկատա- կարանաց]	Փաքույթ, նկարա- գարդ	1801	Կ. Պօ- լիս, Պա- լաթ	Գրիչ Մել- քն Բիյ., ծաղկող՝ Խաչա- տուր տորգ., Ան- տոնն տորգ.	Ներսէս Ղազվինցի
(Ա) Է205	[Ազգաբանութիւն Արիստոտէլի]	Գիրք, նկարա- գարդ	ԺԷ	-	-	Ներսէս Ղազվինցի
(Բ) Մ7350	[Գաւազանագիրք Աստուածաշոնչ գրոց], Էջ 2բ-17ա	Գիրք, նկա- րագարդում ներ շոնի, անավարտ	ԺԷ	-	-	Շմատն վրդ.
(?) Վի2021 *	[Կարգ եւ թիւ տոհմից նոր Կտակարանաց]	Հմայիլ?	ԺԷ- ԺԹ	-	-	-

**Ануш Саркисян**  
**Источник рукописей “Краткой Библии” (CBL551 и M10772),**  
**переписанных главным писцом Ованнесом**

Среди работ иероя Ованнеса, одного из самых знаменитых рукописцев амидской школы XVII века, особняком стоят две однотипные рукописи, CBL551 и M10772. Их текст является генеалогическим древом и списком последовательности правителей в библейской истории, при этом важнейшее место уделено генеалогии Христа. Арборальные и иные таблицы придают материалу наглядность, и к ним прилагаются тексты с объяснениями. Особенности рукописей в основном обусловлены систематизированным строением дерева, изобразительными элементами и разнообразными украшениями текста, а также вертикальным использованием пространства, а в случае CBL551 – форматом книги-аккордеона.

\* Նկարագրությունն անբավարար է ձեռագիրը որևէ խմբի դասելու համար:

Произведения генеалогического характера в армянской литературе появились одновременно с ее формированием, а рукописи с подобным содержанием известны начиная с XIV века. Исследование показало, что интересующий нас текст – переведенная с латыни "Краткая история в генеалогии Христа" (*Compendium historiae in genealogia Christi*) французского теолога и священника XII века, канцлера церкви Парижа Петра из Пуатье (~ 1130-1205 гг.). Однако в исследуемых рукописях присутствуют некоторые художественные дополнения, согласно нашим наблюдениям принадлежащие писцу Ованнесу.

**Anush Sargsyan**  
**The origin of MSS CBL551 and M10772 of the “Abridged Bible”**  
**Copied by Yohannes Chief Scribe**

A specific place among the works of priest Yohannes, one of the most famous scribes of the XVII century Amid school of writing, belongs to two similar manuscripts, CBL551 and M10772. Their text comprises the genealogy and a list of succession of rulers in the Biblical history, in which the most important place is reserved for the genealogy of Christ. Trees and other diagrams visualize the material, and the texts attached to them contain explanations. Specific features of the manuscripts are: the systematized structure of the tree, pictorial elements and various ornamentation of the text, as well as the vertical use of the writing space, in case of CBL551 it is also the accordion book format.

Genealogical works appeared in Armenian literature already in its formative period, whereas manuscripts with such contents are known starting with the XIV century. Our study revealed that the text is a translation from Latin of the *Compendium historiae in genealogia Christi* by the French theologian and the chancellor of the Church of Paris Peter of Poitiers (ca. 1130-1205). Nevertheless, the manuscripts in question contain additional pictorial elements, which, according to our observations, belong to scribe Yohannes.